

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՈՆԸ ԵՎ ՀՐԵԱԿԱՆ ՀՈԼՈՔՈՍԸ  
(գուճահեռներ, նմանություններ և  
տարբերություններ)  
ԱՐԾՎԻ ՀՈՒՆԱՆՅԱՆ

## 1.

Հայաստանում Իսրայելի դեսպան Ռիկվա Կոհենը 2002թ. փետրվարին պաշտոնի բերումով առաջին անգամ լինելով Երևանում, իր ելույթներից մեկում հարկ համարեց ժխտել հայերի ցեղասպանությունը, այն որակելով իբրև ընդամենը ցավալի ողբերգական իրադարձություններ, որոնք իբր թե ոչ մի կերպ չեն կարող համեմատվել հրեաների Հոլոքոստի հետ: Նրա այս հայտարարությունը մեզ համար անսպասելի էր և... սպասելի, եթե նկատի ունենանք հրեական պետության վաղուց ի վեր հայտնի պաշտոնական դիրքորոշումը մեզ հետաքրքրող հարցում: Ավելի քան ակնհայտ է, որ արաբական աշխարհի հետ հակամարտության մեջ գտնվող այս երկիրն ամեն կերպ ուզում է հաճոյանալ մերձավոր արևելյան տարածաշրջանում իր միակ դաշնակցին՝ Թուրքիային: Դա, թերևս, հասկանալի պետական վարքագիծ կարող էր լինել, եթե իր որոշ դրսևորումներով ուղղված չլիներ մի այլ երկրի ու ժողովրդի, այս դեպքում՝ Հայաստանի և հայերի դեմ:

Աշխարհում և կյանքում ընդունված պրագմատիզմը մի կերպ տանելի է, թերևս, այնքան՝ ժամանակ, քանի դեռ չի վերածվել բացարձակ արսուրդի, ինչը մենք տեսնում ենք Իսրայելի որոշ պետական գործիչների վարքագծում: 2001թ. այդ երկրի արտաքին գործերի նախարար Շիմոն Պերեսը Թուրքիայում ելույթ ունենալով, փորձեց անգիտանալ Հայոց ցեղասպանության իրողությունը կամ անճիշտ որակում ու գնահատական տալ նրան: Մի տարի անց՝ 2002թ. փետրվարին, ինչպես նշեցինք, Հայաստանում Իսրայելի դեսպանը՝ Ռիկվա Կոհենը, նույնը կատարեց ոչ այլուր, քան... Երևանում: Հարգարժան տիկինը ոչ միայն չէր բարեհաճել զգույշ և փափկանկատ գտնվել իրեն հյուրընկալող երկրում, այլև, հաշվի չնստելով պատմական անհեթեթելի իրողության հետ, զբաղվել էր բացարձակ կեղծարարությամբ, ժխտել անժխտելին: Ընդ որում արտառոցն ու ցավալին այն է, որ հայերի ցեղասպանությունն ուրանում է իր Հոլոքոստն ապրած երկրի պաշտոնական ներկայացուցիչը, ում Երևանում, զարմանալիորեն, հակահարված չտվեցին՝ բավարարվելով նրա մեկնումից հետո նուտա հղելով Իսրայելի կառավարությանը, որից ստաց-

վեց... իր դեսպանի տեսակետը պաշտպանող և հաստատող պատասխան: Մինչդեռ Եվրոպայում հուրախություն մեզ չուշացավ արդարացի և համարժեք արձագանքը: Լեհաստանի հայտնի լրագրող, քաղաքական մեկնաբան, տեղի հրեական համայնքի ղեկավար, «Միդրագ» հրեական ամսագրի խմբագիր Գերերթը, այդ երկրի ամենաազդեցիկ «Գազետա վիբորժա» պարբերականում տպագրած իր «Վաղալով հիշողության հետ» խորագրով հոդվածում, անդրադառնալով Ռիկվա Կոհենի վերահիշյալ հայտարարությանը և մտաբերելով Հիտլերի հայտնի խոսքերը թուրքերի ոճրագործության մոռացության տրվելու մասին, ընդգծում է. «Առաջին հերթին բոլոր հրեաները պետք է հիշեն Հայոց ցեղասպանությունը, քանի որ նրանք լավ գիտեն զինը, որ պետք է վճարել կարճ հիշողության համար»:

Շատ ավելի ազդեցիկ ու տպավորիչ է Երուսաղեմի «Հոլոքոստի և ցեղասպանության» ինստիտուտի տնօրեն, «Ցեղասպանության հանրագիտարանի» գլխավոր խմբագիր, պրոֆեսոր Իսրայել Չարնիի արձագանքը: Հրեական պետության արտգործնախարարությանը և նրա գլխավոր պաշտոնատարներին՝ նախարար Շիմոն Պերեսին, փոխնախարար Միխայել Մելխիորին և դեսպան Ռիկվա Կոհենին հղած նամակում, նա գրում է. «Իբրև հրեա և իսրայելցի ես խորապես ամաչում եմ Հայոց ցեղասպանությունը ժխտելու ձեռք բերող շեղումների համար: Հայոց ցեղասպանության ժխտումը համարժեք է Հոլոքոստը ժխտելուն»: Մեծարգո պրոֆեսորին միաժամանակ իր երկրի իշխանավորներին հիշեցրել է, որ Հոլոքոստի 126 մասնագետներ 2000թ. հայտարարել են Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին:

Այս և նման այլ փաստերի լույսի տակ միանգամայն պարզ է դառնում, որ Հայոց ցեղասպանության վերաբերյալ հրեա ժողովրդի, հատկապես նրա գիտակից և առաջադեմ խավերի նշանավոր ներկայացուցիչների վերաբերմունքը բոլորովին այլ է և ոչ մի ընդհանուր բան չունի այդ հարցում Իսրայելի պաշտոնական դիրքորոշման հետ:

Իսրայելի կառավարության, նրա բարձր պաշտոնյաների գործելակերպն էլ ավելի մերժելի է դառնում մանավանդ որոշ թուրք առաջադեմ մտավորականների ազնիվ դիրքորոշման ֆոնին: Ահա նրանցից ևս մեկի ողջամիտ դատողությունը. «Զանի՞ դար ևս մենք շարունակելու ենք, ինքներս անմեղ լինելով, մեր ուսերին կրել իթթիհատների մեղքերը»: Մինչդեռ Իսրայելի բարձրաստիճան պետական այրերը պետական-քաղաքական ինչ-ինչ հաշիվներից ելնելով անտեսում են մարդկայնության ու խղճի, արդարության ու բարոյականության սրբազան գաղափարները:

\* \* \*

Իսրայելի արտաքին գործերի նախարարի և Հայաստանում նրա դեսպանի հայտարարություններում ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ նրանք Հայոց ցեղասպանությունը, իբրև այդպիսին, չեն ընդունում՝ ելակետ ունենալով Հոլոքոստի բացառիկության մասին իրենց կանխակալ կարծիքը: Տվյալ իրողությունը հաշվի առնելով կարելի է կարծել, որ հրեական պետության սույն միտումնավոր վարքագիծը, թերևս, պայմանավորված է ոչ միայն օբյեկտիվ պատճառներով (տարածաշրջանային ռազմաքաղաքական շահեր, Թուրքիայի հետ դաշնակցային պարտավորություններ), այլև որոշ սուբյեկտիվ գործոններով, որոնց դերը բնավ էլ աննշան չէ: Հավանաբար Իսրայելի ոչ միայն կառավարական, այլև հասա-

րակական շրջանակներում ու, թերևս, նաև հրեա ժողովրդի մեջ տարածում գտել ու, երևի, արդեն արմատակալել է այն իրականությամբ չհամապատասխանող պատկերացումը, թե Հոլոքոստը համաշխարհային պատմության մեջ նմանը չունեցած, աննախադեպ երևույթ է:

Առաջին հայացքից դժվար ընկալելի է, թե ինչո՞ւ և ինչպե՞ս է ձևավորվել այս անհիմն համոզումները կամ գուցե՝ բարդությո՞ւնը հրեաների մոտ: Պատահած աղետի հրեշավորությունի՞ց, թե՞ իրենց ապրած ողբերգության մեծությունից, անհամար կորուստների ու կրած տառապանքների ահռելի ցավի՞ց: Երևի թե՛ մեկից, թե՛ մյուսից, և դա մարդկայնորեն հասկանալի է, բայց, այսուհանդերձ, կյանքի երևույթների նկատմամբ զուտ կամ ընդգծված հուզական մոտեցումը, թերևս, ամենից քիչ բնորոշ է իրատեսական սթափ մտածողությամբ օժտված այս մեծ ժողովրդին: Եվ ուրեմն շատ ինքնավայել գործ կլինի, եթե մեզ բախտակից ազգի զավակները հրաժարվեն Հոլոքոստի եզակիության մասին իրենց նախատրամադրվածությունից և թյուր պատկերացումից: Մանավանդ որ, նրանք, ի ցավ իրենց, բացառիկ են նաև նրանով, որ երկիրն ու պետականությունը կորցնելուց հետո երկար ժամանակ հանիրավի, ամենահալածված ազգն են եղել: Հրեատյացությունը՝ հակասեմիտիզմը սաղմնավորվելով վաղնջական հնում և զոյատևելով ու սաստկանալով, երևի հատկապես 19-րդ և 20-րդ դարերում վերածվել է մշտագո ու աշխարհատարած երևույթի: Իր լայնատարած չափերով ու բազում դարերի տևողությամբ հակասեմիտիզմը հրեաների դժբախտություններից մեկն է եղել, քանզի ոչ մի ուրիշ ազգ այդպես տևականորեն և գրեթե համատարած ձևով ատելության ու անգամ՝ ջարդերի վերածվող (հիշենք թեկուզ ցարական Ռուսաստանը) հալածանքների չի արժանացել: Սա, իհարկե, հրեաների պատմական ճակատագրի դաժան ու վնասաբեր բացառիկությունն է, և ի պատիվ իրենց, նրանք դիմացել են ինչպես մյուս, այնպես էլ այս հազարամյակների հարվածներին:

Մենք՝ հայերս, հալածված ազգ ենք եղել ոչ մշտապես և ոչ ամենուր: Ահա այստեղ, միայն այստեղ մենք չենք կարող հրեաների եզակիությունը վիճարկել:

Խոսելով հրեաների զարմանալի ազգային յուրահատկությունների մասին անհնար է չընդունել այն իրողությունը, որ այս հիմնավորոց ժողովուրդն իր աներևակայելի կենսունակությամբ ու դիմացկունությամբ, ազգային ինքնությանը երբեք, ոչ մի պարագայում չդավաճանելու միայն իրեն հատուկ հազվագյուտ ունակությամբ, կորուսյալ հայրենիքին երբ էլ լինի, ինչպես էլ լինի տիրանալու և ի վերջո՝ Ավետյաց երկիր ոտք դնելու դարերով փայփայած ու սևեռուն գերլինդի դարձրած սրբազան գաղափարին ոչ թե հարյուրամյակներով, այլ հազարամյակներով հավատարիմ մնալու անհավատալի, ուղղակի առասպելական կարողությամբ, իրոք բացառիկ է: Հենց թեկուզ այն, որ շատ վաղուց, անհիշելի ժամանակներից ոչ միայն բնօրրանը, այլև մեծ մասամբ լեզուն ու հավատը կորցրած ու աշխարհով մեկ սփռված լինելով, կոպիտ խտրականության ու հաճախ էլ բռնությունների ու ջարդերի ենթարկվելով, հրեաները բազում դարերի ընթացքում ոչ միայն տոկացել են այլև, ի վերջո, հասել իրենց գերագույն նպատակին՝ կատարյալ վերածնունդ ապրել, դրա ամենապերճախոս և անհերքելի ապացույցն է: Սա եզակի փաստ է համաշխարհային պատմության մեջ:

Մենք՝ հայերս, եթե պահպանվել ենք, ապա շնորհիվ այն բանի, որ պետականությունը կորցնելուց հետո էլ, թեև թուրքական գերվայրագ

բռնակալության լծի տակ, բայց կառչած ենք եղել հարազատ հողին, մեր հիմնավորը երկրին, իսկ եղերական 1915-ից հետո գոյատևել ենք զավթած հայրենիքի վերջին հողակտորի վրա, այժմյան Հայաստանում: Չլինե՞ր այդ բարեբաստիկ հանգամանքը, մենք այսօր, թերևս, ասորիների վիճակում կլինե՞նք: Վկա՝ Հնդկաստանում, Լեհաստանում, Հունգարիայում վաղուց հանգած մեր երբեմնի հայաեռո՞ գաղթօջախները:

Այնինչ, հրեաները, ինչպես ասվեց, մեզանից շատ ավելի վատ վիճակում լինելով, բառիս ուղիղ իմաստով՝ ուղի տակ բոլորովին հարազատ հող չունենալով, իրենց բացառիկությամբ (անկարելի է չխոստովանել) անհնարինը հնարավոր են դարձրել՝ երկու հազար տարի հետո տիրացել երազած հայրենիքին և ստեղծել անկախ ու հզոր պետություն: Սա արդեն այդ ժողովրդի ազգային ոգու ամենահաղթ ուժը հաստատող իրողություն է, մի անհավատալի ձեռքբերում, որի մասին մենք՝ հայերս, լինելով ազգային դաժան ճակատագրով հրեաներին ուղղակի բախտակից ժողովուրդ, միայն երազել կարող ենք: Եվ քանի որ մեր կորուստն անհեղի է ու անլիսաբերելի, ապա հարկ է, որ հրեաներից սովորենք ազգային անհրակամանալի թվացող, բայց գերագույն և սրբազան նպատակներին ամեն կերպ հասնելու և պատմության դաժան արեւնայում հրաշքներ գործելու դժվար, ոչ ամենքին մատչելի հազվագյուտ արվեստը:

Հրեաներն աչքի են ընկնում նաև համաշխարհային քաղաքակրթությանը մատուցած վիթխարի ծառայություններով, մարդկությանը պարզևս մեծաթիվ հանճարներով, որոնք գործել են գիտության ու արվեստի և առհասարակ՝ կյանքի բոլոր ասպարեզներում ու թե՛ վաղ անցյալում, թե՛ նոր և նորագույն ժամանակներում իրենց արտակարգ խոշոր մասնաբաժինն են բերել համամարդկային մշակույթի զարգացման գործում: Այս ամենից հետո մեզ համար պարզապես անհասկանալի է, թե պատմությամբ ու ազգային ճակատագրով, գիտամշակութային անհեղի ծառանգությամբ և, առհասարակ, արարչական արտակարգ կարողություններով իրոք եզակի ժողովրդի ինչի՞ն է պետք, որ իր դժբախտությունը՝ Հոլոքոստը ևս անհամեմատելի լինի: Մանավանդ, որ այդ ձգտումը ոչ միայն անհիմն է, այլև՝ տարօրինակ, քանզի ողբերգության բացառիկությունը ոչ հաճելի է, ոչ էլ պարծենալու բան:

\* \* \*

Ի վերջո, եթե խոսենք ըստ էության, ապա Հոլոքոստը բոլորովին էլ բացառիկ չէ նախ այն պարզ պատճառով, որ նրանից առաջ՝ 1915-ին արդեն տեղի էր ունեցել Հայոց մեծ եղեռնը՝ ոչ միայն 20-րդ դարի, այլև մարդկության պատմության մեջ առաջին պետականորեն ծրագրված ու կազմակերպված և հետևողականորեն իրագործված զանգվածային ցեղասպանությունը: Ու հենց այդ հիմքով էլ կարելի է ասել, որ մինչև գերմանական ֆաշիստների կողմից 1940-ական թվականներին ի կատար ածված հրեաների բնաջնջումը, դարասկզբին Թուրքիայում տեղի ունեցած հայասպանությունը՝ արմենոցիդն էր, իրոք, անօրինակ՝ իբրև մարդկության դեմ ուղղված առաջին, ծանրագույն հանցագործություն:

Հայոց ցեղասպանությունը ողբերգորեն ինքնօրինակ է նաև այն պատճառով, որ, ի տարբերություն Հոլոքոստի, որի ժամանակ հրեաներն իբրև եկվորներ կոտորվել են իրենց ապրած օտար երկրներում և տեղաբնիկների կողմից, մեր ազգակիցներին սեփական բնօրրանում բնաջնջել

են եկվորները: Արդյունքում՝ հայ ժողովուրդը կորցրեց ոչ միայն իր գեներալները կեսը, ինչը վերականգնելի է, այլև ամենաթանկն ու անվերականգնելին կամ դժվար վերականգնելին՝ հայրենիքը: Չէ որ կործանվել կամ թրքաբնակ է դարձվել նրա հազարավոր գյուղերն ու բազմաթիվ քաղաքները, միաժամանակ՝ ոչնչացվել նյութական կուլտուրայի մեծաթիվ անգին հուշարձաններ: Ըստ այսմ, 1915-23 թվականներին թուրքերն իրագործել են ոչ միայն մի ողջ հնադարյան ազգի բնաջնջումը, այլև Հայաստան աշխարհի ավերակումն ու ոչնչացումը: Եվ մի՞թե սա Հոլոքոստից անհամեմատ ավելի մեծ ու համապարփակ ոճիր և բնականաբար՝ առավել զարհուրելի ու եզակի դժբախտություն չէ:

Մեր ազգի ողբերգության պատկերը լրիվ չի լինի, եթե չավելացնենք, որ ոչ միայն կիսով չափ կոտորվելով, այլև կորցնելով հսկայական տարածքներ, նա անցյալ հարյուրամյակում հայտնվեց հույժ աննպաստ պայմաններում: Թուրքիան, տիրանալով Արևմտյան Հայաստանին և Արևելյան Հայաստանի կեսին ու մի բուռ հող թողնելով (ոչ իր կամքով, այլ պատմական հանգամանքների բերումով և հայերի հերոսական գոյամարտի շնորհիվ) մեզ, փաստորեն սահմանափակել էր մեր աճի ու հզորացման հնարավորությունները և, ընդհակառակը, բազմապատկել իրենը: Դրա հետևանքով 1915-ից հետո, անցած 8-9 տասնամյակների ընթացքում թուրքերն այժմ 50-60 միլիոն են, իսկ հայերը՝ հազիվ 9-10 միլիոն: Ըստ որում, վերջիններիս գերակշիռ մասը՝ մոտ 5-6 միլիոնը, գտնվում է հայրենիքից դուրս և, ինչպես արդեն ասել ենք, ենթակա է անխուսափելի ուժացման:

Հետևաբար, իր դժբախտ յուրահատկության (հայրենիքի կորուստ) պատճառով Հայոց ցեղասպանությունը, ի տարբերություն Հոլոքոստի, չի ավարտվել և յուրովի, ինքնաբերաբար շարունակվում է (սպիտակ ջարդ), քանզի իբրև անհաղթահարելի, հույժ բացասական գործոն իր վնասակար ազդեցությունն է ունենում մեր ժողովրդի և նրան մնացած մի պատահիկ հայրենիքի ոչ միայն ներկայի, այլև ապագայի վրա: Մյուս կողմից՝ Մեծ եղեռնն իբրև լիովին անպատիժ մնացած արյունոտ գործընթաց պահպանելու է աղետաբեր նախադեպի իր չարագույժ դերն աշխարհում:

Հիրավի դարասկզբին հայերին բնաջնջելով, նրանց հողերը սեփականելու և միջազգային ատյաններում (Ազգերի լիգա, Բեռլինի վեհաժողով և այլն) տասնամյակներով չարչրկված «Հայկական հարցից» ազատվելու թուրքական ծրագիրը բնականաբար աշխարհի ներկա և ապագա հավանական զավթիչների համար կարող է հույժ գրավիչ օրինակ և «ուսանելի» դաս լինել: Եվ մենք գիտենք, թե մարդկության դեմ առաջին անգամ գործված ծանրագույն ոճիրն անպատիժ մնալով, որքան անվնաս ու «ոյուրամարս» եղավ ազգասպանների համար և ուսանելի... Աղուֆ Հիտլերի համար: Չէ որ վերջինս ակնհայտորեն օգտվեց ուրիշ ժողովուրդներին պատկանող երկրամասերը գրավելու և սեփականելու թուրքական արդեն փորձված հակամարդկային մեթոդից:

Նշանակում է Հայոց ցեղասպանությունը, իբրև աշխարհի համար ծայրահեղորեն վտանգավոր նախադեպ, իր չարաղետ ներգործության ուժը կկորցնի լուրջ այն դեպքում, եթե հանցանքի և պատժի անբաժանելիության գրված ու չգրված օրենքով հաղթանակի արդարությունը: Ըստ որում, մեր հայրենիքին տիրանալու նպատակով իրականացված նախճիրի դիմաց Թուրքիայի հատուցումը պետք է լինի համարժեք, այսինքն առաջին հերթին՝ բռնազավթած տարածքները վերադարձնելով: Այսպես, ի տարբե-

րություն Հոլոքոստի, Հայոց ցեղասպանությունը սուկ ճանաչելը (ինչն անելն անգամ չի կամենում Թուրքիան), անգամ նյութական հատուցումը, ոչինչ, քան է մեր կորուստի դիմաց, և բնավ էլ պատմական արդարության լիակատար վերականգնում չի լինի:

Մյուս կողմից՝ այդ մեզ համար գրեթե անիրականանալի միայն բարոյական ու նյութական հատուցման (Հոլոքոստի նման) դեպքում էլ թուրքական մեծ եղեռնագործությունը չի դադարի անչափ վարակիչ օրինակ լինելուց: Չէ որ Հայոց ցեղասպանությունն անպատիժ մնալով և դրանով իսկ ժամանակի ընթացքում կտորորդների արյունոտ ավարարությանը թեկուզ և առերևույթ անփութոխ ու կայուն և ըստ այդմ՝ գրեթե բնական ու օրինական տեսք տալով, արդեն մեկ անգամ գայթակղիչ նախադեպի իր դերը կատարեց Ադոլֆ Հիտլերի համար՝ առեղի կորուստներ պատճառելով համայն մարդկությանը:

Հետևաբար ճանաչելով ու լիովին հատուցելով գրեթե բոլոր առումներով բացառիկորեն աղետավոր Հայոց մեծ եղեռնը, մարդկությունը ոչ միայն կվերականգնի պատմական արդարությունը և կսանձի պտտեցիլացեղասպան երկրներին, այլև անուղակիորեն կդատապարտի նաև եսամուկական շահերով պատակտված աշխարհի հանցավոր անտարբերությունը անպաշտպան ազգերի բնաջնջման արդեն նոր ժամանակներում: Եվ դա շատ կարևոր է ու հրատապ այժմ ավելի, քան երբևէ, քանզի չնայած Հոլոքոստի համընդհանուր ճանաչմանն ու դատապարտմանը և ցեղասպանության մասին ՄԱԿ-ի 1948թ. հռչակած կոնվենցիայի առկայությանը, 20-րդ դարի երկրորդ կեսում էլ տեղի ունեցան (այն էլ անհամեմատ ավելի շատ) ցեղասպանություններ (Կամբոջայում, Սուդանում, Արևելյան Թիմորում, Ռուանդայում, Ուգանդայում, Հասարակածային Գվինեայում, Բալկաններում և այլուր), որոնք ոչ թե հրեական ողջակիզման նման անկասելի, այլ թուրքական մեծ ոճրի նման միանգամայն կանխելի էին, բայց նորից չկանխվեցին:

Արդեն ոչ թե անցյալի, այլ նոր ժամանակների այս ցավալի իրադարձությունները մի ավելորդ անգամ ցույց են տալիս, որ Հայոց ցեղասպանության տրագիզիան խորացնող դաժան յուրահատկությունները շեշտելը և դրանցից անխուսափելիորեն բխող հետևություններով աշխարհին զգաստության կոչելը ավելի քան անհրաժեշտ է և հրատապ: Ի դեպ, հարկ է նշել, որ Հայոց ցեղասպանության ցավալի առանձնահատկություններից մեկը (անկասելի չէր, աշխարհն ի գորու էր այն թույլ չտալ), որ մինչև 20-րդ դարի երկրորդ կեսը միայն իրենն էր, այնուհետև բնորոշ դարձավ, ոչ թե Հոլոքոստին, որը հնարավոր չէր արգելել, այլ նրանից հետո տեղի ունեցած նոր ազգաջինջ կտորածներին: Եվ սխալված չենք լինի, եթե ասենք, որ ՄԱԿ-ի վերոնշյալ կոնվենցիան թեև հռչակվել է Եվրոպայում հրեաների ողջակիզումից հետո և առաջին հերթին դրա առնչությամբ ու պարտադրանքով, բայց օբյեկտիվորեն (եթե անգամ այն ստեղծողները 1915-ի մեծ ոճիրն ի նկատի ունեցած էլ չլինեին, ինչը, ցավոք, հավանական է) ավելի շուտ մարդկության դեմ թուրքերի գործած հանցագործության պատմությունից և նրա եղբրական յուրակերպությունից բխող փաստաթուղթ է:

Այս ամենից լույս այն է հետևում, որ հայերի բնաջնջումը մարդկության դեմ գործված ոչ միայն առաջին, այլև կանխելի և չկանխված և մինչև օրս էլ չհատուցված մեծ ոճիրն է և դրանով իսկ Հոլոքոստից տրամազծորեն տարբեր ու իբրև նախադեպ անհամեմատ ավելի ողբերգական:

Հասկանալի է, իհարկե, որ կյանքում և պատմության մեջ միշտ չէ, որ կնճռոտ հարցերն արդարացի լուծում են գտնում, այն էլ նման լիակատարությամբ: Եվ տառապյալ հրեա ժողովուրդն այդպիսի եզակի բախտի արժանացավ, որովհետև ֆաշիստական Գերմանիան նվաճել էր և հրի ու սրի մատնել ողջ Եվրոպան և սպառնում էր համայն մարդկությանը, իսկ այդ ագրեսոր երկրին պարտության մատնողները և նրա պահանջատերերը մոլորակի մեծ ու հզոր տերություններն էին՝ ԽՍՀՄ-ը, ԱՄՆ-ն և Անգլիան: Այսուհանդերձ, պատմական արդարության վերականգնմանը միշտ և բոլոր դեպքերում հետամուտ լինելն անհրաժեշտ է նոր ոճիրները և անարդարությունները կանխարգելելու համար:

Մինչդեռ հենց միջազգային օրենքը, ՄԱԿ-ի 1948թ. կոնվենցիան է ասում, թե մարդկության դեմ գործված ծանրագույն հանցագործությունը վաղեմության ժամկետ չունի և երբ էլ լինի այն անպայման պետք է հատուցվի: Հակառակ դեպքում, եթե Հայոց ցեղասպանությունը չարժանանա աշխարհի, միջազգային հանրության այնպիսի վերաբերմունքին, որ դրսևորվեց Հոլոքոստի նկատմամբ, ապա այն ինչպես 20-րդ դարի երկրորդ կեսում, երբ տեղի ունեցան բազմաթիվ նոր ցեղասպանություններ, այնպես էլ ապագայում անխուսափելիորեն կպահպանի վտանգավոր օրինակի ոճրածին ազդեցության իր ուժը:

Ահա, այսպիսին է դաժան իրականությունը մեզ հուզող հարցում, և դժբախտության մեջ էլ բացառիկության ձգտող մեր հրեա բախտակիցներին պետք է ասենք, թե չէինք ցանկանա, որ ոչ միայն ցեղասպանության ժամանակ, այլև մանավանդ նրանից հետո նրանք այնքան ձախտորոշությունների ու դժբախտությունների հանդիպած լինեին, ինչքան բաժին ընկավ մեզ: Զե որ Հոլոքոստին հաջորդող հրեական հարցը լիակատար լուծում է ստացել և պատմության, թե ճակատագրի կողմից Իսրայելի ժողովրդին հասցված ծանր վերքերն ապաքինվել են մինչդեռ մշտապես չարչրկված ու դժբախտ «Հայկական հարցը» վերածվել է «հայ դատ» կոչվող մի խրոնիկական, անբուժելի վերքի:

Հոլոքոստի եզակիությունն ընդգծելով, հրեաները երևի ի նկատի ունեն նաև իրենց կորստի առեղի չափերը (6 միլիոն) և մարդկանց զանգվածային ոչնչացման գործընթացի, ինչպես իրենք են ասում «արդյունաբերական» մեթոդները, ժամանակակից տեխնիկան, «քաղաքակիրթ» ձևերը (համակենտրոնացման ճամբարներ, գազախցիկներ, վառարաններ և այլն) ու լայնատարած ընդգրկումներ. այստեղ նրանք թերևս իրավացի են: Այո, Հոլոքոստի զոհերն առավել բազմաքանակ են, մոտ երեք անգամ (և ոչ թե չորս, եթե նկատի ունենաք, որ նահատակ հայերի թիվը թեև պաշտոնապես մեկ ու կես միլիոն է համարվում, իրականում ավելի քան 2 միլիոն է, քանզի ջարդերը չեն սահմանափակվել 1915 թվով և շարունակվել են մինչև 1923 թիվը և տեղի են ունեցել նաև Արևելյան Հայաստանում) ավելի քանջնջված հայերից: Մյուս կողմից՝ Հոլոքոստը ցնցում է իր աշխարհագրական ընդգրկման չափերով: Ֆաշիստները հրեաներին «տրսում» և սպանում էին ոչ միայն Գերմանիայում, այլև իրենց գրաված հսկայական տարածքներում, այսինքն գրեթե ողջ մայրցամաքում, ինչպես արևմտյան, անպես էլ

\* Եթե ի նկատի ունենանք ավելի վաղ տեղի ունեցած և հատկապես սուրբան Համիդի կազմակերպած ջարդերը՝ սկսած 1890-ական թվականներից, ապա զոհերի թիվը երևի 3 միլիոնից էլ անցնի:

արևելյան Եվրոպայում, ԽՍՀՄ օկուպացված բոլոր շրջաններում: Դա իրոք, մի վիթխարի արյունոտ գործընթաց էր, որն աչքի էր ընկնում իր բացառիկ կազմակերպվածությամբ ու հետևողականությամբ:

Ահա վերոհիշյալ առումներով միայն բացատրության, եզակիության տարրեր կան հրեական Հոլոքոստի մեջ, իսկ մյուս առավել էական տեսակետներից, ցավոք, բացառիկը Հայոց ցեղասպանությունն է:

Մեր ազգակիցների զանգվածային սպանդն Արևմտյան Հայաստանում հենց թեկուզ դաժանության տեսակետից անհամեմատելի է: Մարդուն ոչ միայն կյանքից զրկելու, այլև ստորացնելու և զանազան առավել տանջալից ու անպատիվ ձևերով մեղցնելու հատկությամբ, սպանության «արհեստում» դաժան երևակայություն ու հնարամտություն դրսևորած թուրքերը մնացին չգերազանցված: Եվ ավելի քան ակնհայտ է, որ ցեղասպանության թուրքական վայրենի մեթոդն ու հետամնաց «տեխնիկան», շատ ավելի գռեհիկ և չարադաժան են եղել:

Ի վերջո, հարկ է անդրադառնալ նաև մեր ողբերգության յուրահատկությանը, որի մասին ակնարկել ենք: Խնդիրն այն է, որ եթե հրեաների Հոլոքոստն իրականացրել է երկրորդ աշխարհամարտը սանձազերծած և ռազմական տեսակետից ողջ մտլորակին սպառնացող հզորագույն մի տերություն՝ ֆաշիստական Գերմանիան, ում ոչ ոք, անգամ մեծ տերությունները չէին կարող սանձել և հազիվ սեփական ապահովության մասին էին մտածում, ապա հայերի բնաջնջումը, թեև դարձյալ տեղի է ունեցել համաշխարհային պատերազմի (այս անգամ Առաջին) տարիներին, բայց բոլորովին տարբեր միջազգային իրադրության մեջ, ռազմա-քաղաքական ուժերի միանգամայն այլ դասավորության և հարաբերակցության պայմաններում: Չէ որ պետականորեն ծրագրված ու խնամքով կազմակերպված զանգվածային ցեղասպանությունն իրագործել էր թույլ, հզորագույն Անտանտի թշնամի մի երկիր՝ Թուրքիան: Ու բնական է, որ այս պայմաններում վերջինիս սանձել ու տսկալի նախճիրը կանխել ի վիճակի էին մեծ տերությունները, ըստ որում՝ ոչ միայն ոճրագործ պետության պատերազմական հակառակորդները՝ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը, այլ հենց նրա դաշնակիցը՝ Գերմանիան, որի մի խոսքն ի զորու էր կասեցնել աղետը: Մինչդեռ տեղի ունեցավ ճիշտ հակառակը՝ Գերմանիան ոչ միայն չէր սանձում իր կրտսեր զինակցին ու հետևորդին, այլև, ինչպես հայտնի է, գաղտնի խրախուսում ու հրահանգում էր հայերի սպանող, գերմանացի սպաներն անգամ ներկա էին ջարդերին և որպես ականատես ու վկա լուսանկարում էին սահմնկեցուցիչ տեսարանները, սառնասրտորեն դիտում, թե ինչպես են խոշտանգում ու սպանում մտլորակի առաջին քրիստոնյա ազգի զավակներին, իրենց հավատակից եղբայրներին:

Ի՞նչ արեցին, սակայն, մեր արդեն նշած մյուս մեծ տերությունները և արդեն Թուրքիայի պատերազմական թշնամիները՝ Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը և մյուսները: Գրեթե ոչինչ, եթե նկատի ունենաք, որ նրանք ձևական հայտարարություններից այն կողմ չանցան, թեպետ հենց Թուրքիայում իրենց դեսպանները սահմնկեցուցիչ լուրեր էին հաղորդում այդ երկրում արևմտահայերի բնաջնջման մասին: Եվ ինչպես տեսնում ենք, Անտանտի անդամ այս երեք հզոր պետությունների պահվածքը, մեղմ ասած, քննադատության չի դիմանում: Առավել դատապարտելին, սակայն, նրանցից մեկի՝ ցարական Ռուսաստանի վարքագիծն էր: Եվ այս այն դեպքում, երբ ավանդաբար Հայաստանի և հայ ժողովրդի դաշնակցի ու բարե-

կամի համարում ունեցող Ռուսաստանը, ի տարբերություն իր վերոհիշյալ դաշնակիցների, անմիջականորեն պատերազմում էր ընդդեմ Թուրքիայի: Հետևաբար նա բացառիկ հնարավորություն ուներ կանխելու աղետը: Եվ պատահական չէ, որ երբ 1915-ին Նիկոլայ երկրորդն այցելում է կովկասյան ռազմաճակատ, Կարս և ցանկանում տեսակցել հայ նշանավոր ռազմական գործիչներին ու ազատամարտիկներին, նրանցից շատերը, այդ թվում նշանավոր Քեռին, խմբապետ Շավարշը և ուրիշները, արհամարհանքով չեն ներկայանում նրան: Հայ ժողովրդի համար ողբերգական այդ տարիներին ցարական պետության հակահայ քաղաքականությանն ի տես, վրդովվել ու հիասթափվել էին շատերը, թե՛ զինվորներ, թե՛ զորահրամանատարներ և նրանց մեջ նույնիսկ երդվյալ ռուսասեր, լեգեներար Անդրանիկը:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե այս ամենն անմիջականորեն չեն առնչվում հողվածում շոշափվող թեմային, այնինչ դժվար չէ հասկանալ, որ թե՛ վերոհիշյալ և թե՛ ուրիշ՝ մեզ հայերիս համար դաժան իրողությունները շատ ավելի ծանր ու մռայլորեն բացառիկ են դարձնում մեր ազգային դժբախտությունը, քանզի անմիջականորեն առնչվում են Հայոց ցեղասպանությանը, նրա դաժան յուրահատկությունն են, տխուր մախապատմությունը կամ վերջաբանը: Եվ ի հաստատումն մեր այս մտքի պետք է, որ անպայման ի նկատի ունենանք դարասկզբի իրողությունները:

Բավական է հիշել 20-րդ դարում Մեծ եղեռնով սկսվող ու չվերջացող հայկական ձախողությունների անվերջանալի շղթայի եզրափակիչ օղակը, կորուսյալ հայրենիքին տիրանալու վերջին բավական իրական հույսի կործանումը: Դա Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակից հետո սովետական զորքերի Թուրքիա ներխուժելու ստալինյան պլանի անսպասելի տապալումն էր՝ թուրքափրկիչ արևմտյան մեծ տերությունների միջամտությամբ: Պողպատյա բռնակալը, որ հայտնի պատճառներով ֆաշիստական Գերմանիայի դաշնակից Թուրքիայի դեմ զայրացած էր և հաստատ վճռել էր ետ խլել ողջ Արևմտյան Հայաստանը՝ նրա մի զգալի մասը Վրաստանին նվիրելու ցանկությամբ, Արևմուտքի ճնշման տակ ստիպված էր հրաժարվել իր այդ՝ մեզ համար փրկարար մտադրությունից: Մանավանդ որ աշխարհաքաղաքական շահերի փոփոխման պատճառով մեծ տերությունները՝ ԱՄՆ-ն և Անգլիան իրենց երեկվա թշնամուն պաշտպան էին կանգնում:

Ինչպես տեսնում ենք, ոչ թե արդարությունը, այլ իր եսամոլական հաշիվներին հետամուտ աշխարհը կանխելի Հայոց ցեղասպանությունը ոչ միայն չկանխեց, այլև այդ մեծ աղետից հետո էլ՝ 1915-1921թթ. աղետյալ ժողովրդի իրավունքների վերականգնմանը չաստարեց, իսկ 1945-1946թթ., երբ գերմանական ֆաշիզմը ջախջախվել էր, և եզակի բարենպաստ պայմաններ էին ստեղծվել Հիտլերի դաշնակցից Թուրքիայից ետ խլելու իր զավթածը, բարի կամք չդրսևորեց Հայկական հարցին արդար լուծում տալու և ահեղ փորձության ենթարկված ազգի ու նրա հայրենիքի իսկական, լիակատար վերածնունդն ապահովելու համար:

Այսպիսով, հրեական Հոլոքոստի և Հայոց ցեղասպանության նկատմամբ մեծ տերությունների, միջազգային հանրության դրսևորած վերաբերմունքը ոչ միայն միանման չէ, այլև բոլորովին տարբեր է: Մի դեպքում՝ եթե մարդկության դեմ գործած ծանրագույն հանցագործությունը համընդհանուր ճանաչում է գտել և մեղավոր երկրի՝ Գերմանիայի, կողմից դատապարտվել ու լիուլի հատուցվել, իսկ պատերազմի և ցեղասպանու-

թյան հանցավորները պատժվել (մյուրներեքյան դատավարություն), ապա մյուս դեպքում մեծան բան հիմնականում տեղի չի ունեցել: 1915-ին կատարված ցեղասպանությանը Նյուրեմբերգ չհաջորդեց, և նրանից մտա ինը տասնամյակ հետո էլ կոտորված ու տարագրված ազգը ոչ միայն նյութական ու բարոյական, մասնավոր տարածքային հատուցում չի ստացել զլխավոր հանցագործից, այլև ճակատագրի հեզմությանը, խոր վիրավորանք է զգում թուրքական ուրացության վկան լինելով: Ուրացություն, որ պետական քաղաքականության մակարդակի է բարձրացված և կիրառվում է ամենայն հետևողականությամբ:

Ինչպես տեսնում ենք, երկու ազգաջինջ նախճիրների, բնական, ենթադրելի հետևանքների պարզ համեմատությունն իսկ որոշակիորեն ցույց է տալիս, որ դրանք մերթ (հրեաների դեպքում) մխիթարում ու թեթևացնում ու մերթ (հայերի պարագայում) ընդհակառակը, առավել խոր խոցելով ավելի ծանրացնում ու դառնացնում է մեր ժողովուրդների՝ պատմության երկու մեծ տառապյալների վիշտն ու ողբերգությունը:

Մի խոսքով, անցյալ դարում կենսական-պատմական հանգամանքների մեզ համար աննպաստ դասավորության և մոլորակի կյանքը տնօրինող հզորագույն մեծ տերությունների աշխարհաքաղաքական խաղերի հետևանքով ստեղծված բարդ ու ճակատագրական իրադրություններում որքան թուրքիայի բախտը շոայտրեն բերել է, այնքան Հայաստանինը ողբերգական է եղել:

Դրա հետևանքով էլ ժամանակին միջազգային ատյաններում այնքան չարչրկված «Հայկական հարցը» մեր ժողովրդի կեսի բնաջնջման և նրա հայրենիքի բռնագրավման ու յուրացման կամ ավելի ճիշտ՝ թրքացման հետևանքով ավաղ, վերածվել է հայոց դատի, որ մաս մարդկության դատն է: Մենք վստահաբար այսպես ենք ասում, ոչ թե լոկ հիշելով Անատոլ Ֆրանսի մարգարեական խոսքերը կամ ելնելով մարդկային տարրական բարոյականության ու խղճի թելադրանքից, այլ՝ միջազգային օրենքից: Չէ որ ՄԱԿ-ի 1948թ. կոնվենցիան որոշակիորեն ասում է, թե ցեղասպանությունը մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն է, իսկ սրանից ուղղակիորեն այն է հետևում, որ մեկ կամ մի քանի (ինչպես թուրքիան) ժողովուրդ բնաջնջած երկիրը ներկայանալու է ոչ միայն նահատակ ազգի կամ ազգերի, այլ ողջ աշխարհի դատին:

Հետևաբար «Հայկական հարցը» դեռ օրակարգում է և մշտապես կլինի, քանի դեռ արդարությունը լիակատար հաղթանակ չի տարել:

Այսպիսով մեզ հուզող հարցերի անայառ վերլուծությունը կարծում ենք բացահայտում է բուն ճշմարտությունը 20-րդ դարում տեղի ունեցած երկու մեծ ողբերգությունների գնահատման հարցում՝ դրանով իսկ երևան հանելով Հոլոքոստի բացառիկության վերաբերյալ հրեական որոշ (հատկապես պաշտոնական) շրջանակների ունեցած անհասկանալի հավակնությունների սնանկությունը:

\* \* \*

Դժբախտության մեջ առաջինը լինելով, իր կորուստները և դրանց ցավն ու տառապանքը եզակի ու անհամեմատելի հռչակելու համար (և այն էլ՝ Հայոց ցեղասպանությունը նսեմացնելու և անգամ ժխտելու գնով) պայքարելը, որ նախաձեռնեցին հրեաները՝ մեզ ստիպելով անճշտությունն ու թյուրիմացությունը հերքել, մեղմ ասած անլուրջ գործ է: Մինչդեռ, այս դեպ-

քում ճշմարտությունն ասելը և արդարությունը հաստատելը պետք է: Եվ ինչպես արդեն տեսանք՝ իրականությունն այն է, որ Հայոց ցեղասպանությունն իբրև մարդկության դեմ ուղղված առաջին և, մանավանդ, ոչ անկասելի ոճիր թե՛ իր թրքավայել դաժանությամբ և թե՛, մանավանդ, հետևանքներով (բնօրրանի կորուստ, նրա հայաթափություն և թրքացում, մեր ժողովրդի աշխարհասփյուռ հատվածների անխուսափելի ուժացման տխուր հետանկար, հզոր ու արդար պահանջատիրության ունակ Հայաստանի ստեղծման և ազգային մեծ երազի իրականացման, քանկազին կորուստների վերականգնման հնարավորությունների ողբերգական սահմանափակություն) շատ ավելի ծանր դժբախտություն է, քան հրեաների լիովին հատուցված և կորուսյալ հայրենիքի վերագտնումով երջանիկ վերջաբան ունեցող Հոլոքոստը: Եվ հետևաբար բացառիկության բարդությամբ տառապող հրեական որոշ շրջանակների և հատկապես աշխարհաքաղաքական անմաքուր հաշիվներով ղեկավարվող պաշտոնական Իսրայելի խանդոտ անհանդուրժողականությունը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման նկատմամբ և հաշվենկատ պրագմատիզմով՝ թուրքական անարգ ուրացությանը սատար լինելը մերժելի արարք է: Ով, ով, հո նրանք քաջածանոթ են Հիտլերի «ո՞վ է հիմա հիշում հայերի կոտորածները» խոսքերին: Հիրավի, մեզ համար արեւտավոր 1915 թվականից տասնամյակներ անց, երբ եսական ու խելակորույս աշխարհը ոչ միայն դարասկզբի ցեղասպանությունն էր մոռացել, այլև, թերևս Հայաստանն ու հայերին, հանկարծ անպատիժ մնացած թուրքական մեծ ոճիրը հիշում է ոչ այլ ոք, քան՝ ժամանակի մեծ հանցագործը: Ու որքան էլ զարմանալի և տարօրինակ թվա, թուրքերը, որոնց Հիտլերն իր արիական ծագումի ֆյուրերական բարձունքից առհամարում էր, նրա առաջին և ամենամեծ... ուսուցիչներն էին, իսկ հայերի կոտորածներն իրագործած Թալեաթն ու Էնվերը յուր հոգևոր հայրերը: Եվ այս տեսակետից մի՞թե պատահական է, որ հայ վրիժառու Մոդոնոն Թեհլերյանի ձեռքով Բեռլինում սպանված Թալեաթի դին թույլտրվեց Գերմանիայից Թուրքիա փոխադրել միայն 1943-ին, Հիտլերի իշխանության օրոք:

Այնպես որ, մեզ բախտակից հրեաներն արժե, որ իմանա, թե Հայոց ցեղասպանությունն իրենց մեծ ողբերգության արյունոտ նախերգանքն էր տասնամյակներ առաջ, քանզի Հոլոքոստն անուղղակիորեն սաղմնավորվել է մեր ահեղ Գողգոթայի դժոխային քառսում, Ադոլֆ Հիտլերի ուղեղում՝ հեռակա ձևով ցեղասպանության թուրքական «համալսարաններում» անցնելուց հետո: Մակայն, արդյոք միայն Հոլոքոստը: Իհարկե ո՞չ:

Հիտլերը նվաճելով գրեթե ողջ Արևմտյան Եվրոպան, հրեաներին բնաջնջելուն զուգահեռ նպատակադրվել էր հետազայում նաև ԽՍՀՄ ժողովուրդներին ևս կիսով չափ կոտորելով և կիսով չափ ստրկացնելով տեր դառնալ հսկայական տարածքների և դնել իր համաշխարհային տիրապետության հիմքը: Դժվար չէ նկատել այն նմանությունը, որ կա մոնոլիտ Գերմանաֆաշիստական կայսրություն հիմնելու հիտլերյան այս ծրագրի, նրա իրագործման եղանակների և Օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականության ու, մասնավորապես, իթթիհատական-քեմալական Թուրքիայի միատարր ազգային պետություն ստեղծելու մեթոդների միջև: Քանի որ իր շովինիստական-ռասիստական նպատակներին հասնելու, «Թուրքիան միայն թուրքերի համար» մարդատյաց լոգունգը մարմնավորելու համար դարեր առաջ Փոքր Ասիայի տարածքներում հրով ու

սրով արմատավորված այդ «ավազակային պետությունը» (Մարքսի բնութաբանումն է) շատ ավելի վաղ սկսել էր բնաջնջել երկրի հնադարյան ազգերից ոչ միայն հայերին, այլև ասորիներին ու հույներին և, հավանաբար, այս ամբարտ գործընթացից ևս Ադուլֆ Հիտլերը շատ բան էր սովորել և հետագայում զգալի չափով հասցրեց կիրառել իր զավթած մի ողջ մայր ցամաքում՝ Եվրոպայում:

Արդ, ուրեմն շատ ցանկալի է, որ մեզ բախտակից հրեա մեծ ժողովրդի զավակներն իմանան, որ ինչպես իրենց ազգի ազնվականությունը ներկայացնող մեծարգո պրոֆեսոր Չարնին է ասում. «Հայերի ցեղասպանությունն ուրանալ՝ նշանակում է Հոլոքոստն ուրանալ»: Այս խոսքերը, մեջբերում են, քանզի դրանք արտացոլում են բուն ճշմարտությունն այն մասին, որ Մեծ եղեռնն ու Հոլոքոստը երկվորյակ ողբերգություններն են:

Հետևաբար ֆաշիստական ֆյուրերի հայտնի խոսքերը հիշելով և պարոն Չարնիի իմաստունությամբ առաջնորդվելով Իսրայելի քաղաքացիները կարող են մնալ իրենց արժանի բարձրության վրա, իսկ պետական գործիչները շատ ավելի կշահեին, եթե քաղաքական պրագմատիզմին տուրք տալին գոնե՝ չեզոքությամբ: Դա նվազ դատապարտելի և, գոնե, համեմատաբար ազնիվ ու բարոյական կլիներ:

Ուազմաքաղաքական հաշիվների ու տարածաշրջանային երկարածամկետ կամ կարճածամկետ, բայց ի վերջո անցողիկ շահերի վրա հիմնված դաշինքը ոչ թե իսկական բարեկամություն է, այլ լավ շպարված կեղծիք: Ուստի՝ հարկադիր տուրքը տալով հաշվեցկատ պրագմատիզմին, չարժե անցնել պատշաճության սահմանները և դիվանագիտական նկատառումներով հանցագործ մի պետության հանդյանալու համար վիրավորել պատմությամբ ու ճակատագրով իրեն մոտ ու բախտակից ժողովրդին: Մանավանդ, որ իսպառ բացառված չէ, որ ապագայում (զուցե և հետավոր) կամոքն մեր դժվարահաճ ճակատագրի այս տարածաշրջանում կամ նույնիսկ ողջ հողագնդում աշխարհաքաղաքական շահերն այնպես փոխվեն, որ մեր երկու հնադարյան քաղաքակիրթ ազգերը դառնան բարեկամներ ու արդեն ոչ թե հարկադրյալ ու կեղծ, այլ իսկական ու ինքնաբերական դաշնակիցներ:

## Հ. Գ.

Պարբերականների հաղորդագրությունից պարզվում է, որ վերածնված ու նորացված Հայկական հարցն Իսրայելում չի դադարել քննարկման առարկա լինելուց և գտնվում է այդ երկրի հասարակական հետաքրքրությունների շրջանակում: Հատկապես սուր բնույթ ընդունած քննարկումները շարունակական բնույթ ունեն: Ընդ որում այդ շատ կարևոր հարցում Իսրայելի հասարակական կարծիքը միատար չէ, երկատված է: Իսրայելի հասարակական և, մասնավորապես, գիտական շրջանակներում «Հայկական հարցի» մասին գոյություն ունեն հակասական, ուղղակի իրարամերժ տեսակետներ: Դրանք արտահայտող գիտնականների մի մասը (Մինի Ռոզեն, դոկտոր Թորերա) ելնում է իրենց երկրի պետական-պաշտոնական մտայնությունից, իսկ մյուս մասը (դոկտոր Ահարոն, Հուդա Նաուր, Շլոմո Ալիմների) իսկական, մաքուր գիտության պահանջներից ու մարդասիրական վեհ զգացմունքներից: